Հայկուհի Մեղրակյան[1]

ՄԱՐԶՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՖՈՒՏԲՈԼՈՒՄ

Փոքր մարզադպրոցներն ու ֆուտբոլային ակումբները մեծ ավանդ ունեն համաշխարհային ֆուտբոլի զարգացման հարցում: Աշխարհահռչակ ֆուտբոլիստների մեծամասնությունն իր ֆուտբոլային գործունեությունը սկսել է ոչ այնքան հայտնի ֆուտբոլային ակումբներում կամ մարզադպրոցներում: Հետևաբար, արդարացի կլինի, որպեսզի ֆուտբոլիստներ պատրաստող մարզադպրոցներն ու ակումբները, որպես ֆուտբոլիստին պատրաստելու համար կատարված ծախսերի փոխհատուցում, ֆինանսական միջոցներ ստանան այդ ֆուտբոլիստների՝ պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբներ տեղափոխվելու դեպքում: Ի վերջո, ֆուտբոլիստներն իրենց խաղամակարդակի և դրա շնորհիվ պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբներ հրավիրվելու համար պարտական են նաև իրենց մարզած դպրոցներին և սիրողական ֆուտբոլային ակումբներին:

Վերը նշված նպատակով ՖԻՖԱ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգում (այսուհետ՝ ՖԻՖԱ կանոնակարգ) նախատեսվել են մարզումային փոխհատուցման և համերաշխության մեխանիզմների ինստիտուտները:

Սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք մարզումային փոխհատուցման ինստիտուտին, քանի որ վերջինիս իրավական կարգավորումն առաջացնում է մի շարք պրակտիկ խնդիրներ, որոնք և կփորձենք վեր հանել՝ առաջարկելով դրանց լուծման տարբերակներ:

Հոդվածի շրջանակներում վեր կհանենք ՖԻՖԱ կանոնակարգում, Ռուսաստանի ֆուտբոլային միության «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգում (այսուհետ՝ ՌՖՄ կանոնակարգ) և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգում (այսուհետ՝ ՀՖՖ կանոնակարգ) մարզումային փոխհատուցմանը

---

[1] ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Հայկյանց:

նվիրված նորմերի բովանդակությունը՝ փորձելով ներկայացնել ՀՖՖ կանոնակարգի կատարելագործմանն ուղղված համապատասխան առաջարկներ:

Մարզումային փոխհատուցում ակնկալելու իրավունք ունեն ինչպես ֆուտբոլիստին մարզած մարզադպրոցները, այնպես էլ սիրողական և պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբները: Սակայն մարզումային փոխհատուցում ստանալու խնդիրն առավել կարևոր է մարզադպրոցների և սիրողական ակումբների համար, քանի որ վերջիններս ֆինանսավորման աղբյուրների անհամեմատ ավելի փոքր ցանկ ունեն, քան պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբները, բավական է նշել միայն, որ պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբները մասնակցում են տարբեր հռչակավոր մրցաշարերի և այդ մրցաշարերին մասնակցության արդյունքներից կախված դրամական պարգևներից բացի մեծ գումարներ են վաստակում հեռարձակման լիցենզիաներից:

Անդրադառնանք մարզումային փոխհատուցման առավել կարևոր խնդիրներին՝ ներկայացնելով դրանք առանձին-առանձին:

1. Մարզումային փոխհատուցման վճարման դեպքերը.

ՖԻՖԱ կանոնակարգի կարգավորումը.

ՖԻՖԱ կանոնակարգի Հավելված 4-ի 2-րդ հոդվածի համաձայն՝ ֆուտբոլիստին պատրաստելու դիմաց փոխհատուցումը վճարվում է ֆուտբոլիստին մարզած ակումբ(ներ)ին՝

ա) երբ ֆուտբոլիստն առաջին անգամ գրանցվում է որպես պրոֆեսիոնալ կամ

բ) երբ պրոֆեսիոնալը տեղափոխվում է տարբեր ասոցիացիաների ակումբներից մեկից մյուսը (իր պայմանագրի գործողության ընթացքում կամ դրա ավարտի կապակցությամբ)

մինչև այն մրցաշրջանի ավարտը, որի ընթացքում լրանում է ֆուտբոլիստի 23 տարին:

ՌՖՄ կանոնակարգի կարգավորումը.

ՌՖՄ կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆուտբոլիստին պատրաստելու դիմաց փոխհատուցումը վճարվում է ֆուտբոլիստին մարզած ֆուտբոլային ակումբներին (մարզադպրոցներին), երբ մինչև այն մրցաշրջանի ավարտը, որի ընթացքում լրա-

նում է ֆուտբոլիստի 23 տարին 1) ֆուտբոլիստը կնքում է իր առաջին աշխատանքային պայմանագիրը պրոֆեսիոնալի կարգավիճակում ինչպես նաև 2) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի՝ մի պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբից մյուսը տեղափոխվելիս՝ սույն Կանոնակարգով նախատեսված դեպքերում:

ՀՖՖ կանոնակարգի կարգավորումը.

ՀՖՖ կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն՝

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբ(ներ)ին՝

ա) եթե խաղացողը ստորագրում է իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը,

բ) երբ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է մի ակումբից մյուսը (պայմանագրի ընթացքում կամ ավարտից հետո) մինչև իր 23-րդ տարեդարձի մրցաշրջանի ավարտը:

2. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը ծագում է, եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում նախքան նրա 23 տարին լրանալը մինչև մրցաշրջանի ավարտը:

Ինչպես կարելի է նկատել, ՖԻՖԱ-ն և ՌՖՄ-ն հստակ մոտեցում են ցուցաբերել՝ սահմանելով այն ժամանակահատվածը, մինչև որի ավարտը կատարված տեղափոխության համար վճարվում է մարզումային փոխհատուցումը, այն է՝ մինչև այն մրցաշրջանի ավարտը, որի ընթացքում լրացել է ֆուտբոլիստի 23 տարին, ընդ որում այս կանոնը վերաբերում է և՛ առաջին անգամ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքող ֆուտբոլիստի, և՛ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքերին:

Առաջին հայացքից ՀՖՖ կանոնակարգի 20-րդ հոդվածի բովանդակությունը ոչնչով չի տարբերվում ՖԻՖԱ-ի և ՌՖՄ կանոնակարգերի համապատասխան հոդվածների բովանդակությունից: Սակայն ՀՖՖ կանոնակարգի նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը ծագում է, եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում **նախքան նրա 23 տարին լրանալը** մինչև մրցաշրջանի ավարտը:

Փաստորեն, եթե ՀՖՖ կանոնակարգի 20-րդ հոդվածի առաջին մասը մարզումային փոխհատուցում վճարելու պարտականությունը

պայմանավորում է մինչև ֆուտբոլիստի 23 տարին լրանալու մրցաշրջանի ավարտը կատարված տեղափոխությամբ, ապա նույն հոդվածի 2-րդ մասն այդ նույն պարտավորությունը պայմանավորում է այն տեղափոխությամբ, որը տեղի է ունեցել մինչև ֆուտբոլիստի 23 տարին լրանալը: Այսպիսով՝ ՀՖՖ կանոնակարգի նույն հոդվածի տարբեր մասերում ամրագրված են երկու իրարամերժ նորմեր, և անհասկանալի է, թե նշված հոդվածի որ մասով պետք է առաջնորդվել, հատկապես այն դեպքերում, երբ ֆուտբոլիստի 23-րդ տարին լրանում է մրցաշրջանի միջնամասում, և նա տրանսֆերի է հանվում մրցաշրջանի 2 հատվածների միջև ընկած գրանցման ժամանակահատածի ընթացքում՝ փաստացի 23 տարին լրանալուց հետո: Եթե ղեկավարվենք քննարկվող հոդվածի 2-րդ մասով, ապա նշված իրավիճակում փոխհատուցման վճարման պարտավորություն նոր ակումբը չի ունենա: Սակայն նման մոտեցումն ընդունելի համարել չի կարելի, քանի որ հին ակումբը չպետք է զրկվի իրեն հասանելիք փոխհատուցման գումարից այնպիսի հանգամանքի պատճառով (այն է՝ անձի ծննդյան ժամանակահատվածը), որն իրենից կախված չէ և որը փոփոխել ինքը չի կարող: Քննարկվող հոդվածի 2-րդ մասի կիրառման պարագայում ակումբները շահագրգռված կլինեն ֆուտբոլիստի տրանսֆերն իրականացնել մինչև նրա 23 տարին լրանալը, ինչից կարող են օգտվել ֆուտբոլիստի տրանսֆերով հետաքրքրված ակումբները՝ ֆուտբոլիստին ձեռք բերելով ավելի պակաս գնով, քան նախատեսում էին: Հենց նման երևույթները կանխելու համար է, որ ՖԻՖԱ-ն սահմանել է «մինչև այն մրցաշրջանի ավարտը, որի ընթացքում լրանում է ֆուտբոլիստի 23 տարին» արտահայտությունը, ինչը և հավասարության նշան է դնում տվյալ մրցաշրջանի ընթացքում 23 տարեկան դարձող բոլոր ֆուտբոլիստների տրանսֆերների միջև՝ թույլ տալով խուսափել անհարկի չարաշահումներից և փոխհատուցման գումարի վճարման պարտականությունից խուսափելուց:

Կարծում ենք՝ ՀՀ-ում ներքին տրանսֆերներ իրականացնելիս պետք է առաջնորդվել քննարկվող հոդվածի 1-ին կետով՝ ՀՖՖ կանոնակարգից հանելով քննարկվող հոդվածի 2-րդ կետը (մեր խորին համոզմամբ հոդվածի 2-րդ կետը ՖԻՖԱ կանոնակարգի ոչ լիարժեք թարգմանության արդյունք է, որը գործնականում կարող է խնդիրներ առաջացնել):

ՀՖՖ կանոնակարգի քննարկվող հոդվածի ձևակերպումը կարող է շփոթություն առաջացնել նաև այն հարցի կապակցությամբ, թե որ դեպքին է վերաբերում ֆուտբոլիստի 23 տարին լրանալու պահանջը՝ հաշվի առնելով, որ այդ պահանջը շարադրված է քննարկվող հոդվածի 1-ին կետի բ) ենթակետում: Սակայն այդ պահանջը վերաբերում է նաև հոդվածի առաջին մասի ա) կետին, ուստի առաջարկում ենք այս պահանջը շարադրել կամ ՖԻՖԱ կանոնակարգում շարադրված առանձնացված ձևով կամ այն խմբագրությամբ, որն առկա է ՌՖՄ կանոնակարգում:

ՀՖՖ կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն՝ մարզումային փոխհատուցում վճարվում է, երբ ֆուտբոլիստը կնքում է իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը կամ, երբ պրոֆեսիոնալ ֆուտբոլիտը տեղափոխվում է մի ակումբից մյուսը, սակայն ՀՖՖ կանոնակարգի հավելված 4-ը սահմանում է նաև սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցմանը վերաբերող նորմեր: Նման կարգավորում ոչ միայն սահմանված չէ ՖԻՖԱ և ՌՖՄ կանոնակարգերով, այլև ընդունելի չէ գործնական տեսանկյունից, քանի որ մարզումային փոխհատուցման նպատակն առաջին հերթին ֆուտբոլիստին պատրաստած ֆուտբոլային դպրոցների և սիրողական ակումբների խրախուսումն է այն պրոֆեսիոնալ ակումբների ֆինանսական միջոցների հաշվին, որոնք օգտվում են ֆուտբոլիստի ծառայություններից իրենց եկամուտները մեծացնելու, բազմապատկելու համար, իսկ թե ինչ եկամուտներ է ստանում սիրողական ակումբը ֆուտբոլիստ ձեռք բերելու արդյունքում, որի համար էլ, ըստ ՀՖՖ կանոնակարգի կարգավորման, պարտավոր է մարզումային փոխհատուցում վճարել, այն էլ պրոֆեսիոնալ ակումբների հետ հավասար հիմունքներով, անհասկանալի է:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՖՖ կանոնակարգից հանել սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցմանը վերաբերող նորմերը:

2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցան վճարման պարտականության առաջացման հիմքերը.

ՖԻՖԱ կանոնակարգի կարգավորումը.

ՖԻՖԱ-ի կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն՝ ֆուտբոլիստին պատրաստելու դիմաց փոխհատուցումը վճարվում է ֆուտբոլիստին մարզած ակումբ(ներ)ին՝ … 2) պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի յուրաքանչյուր տեղափոխության դեպքում (…): Ֆուտբոլիստին պատրաստելու համար փոխհատուցում վճարելու պարտականությունը ծագում է անկախ այն հանգամանքից՝ տրանսֆերն իրականացվում է խաղացողի պայմանագրի գործողության ընթացքում, թե դրա ավարտի կապակցությամբ:

Այսպիսով, ՖԻՖԱ-ն սահմանում է ընդհանուր կանոն, որի համաձայն, պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման (ընդ որում՝ խոսքը վերաբերում է մինչև պայմանագրի գործողության ավարտի պահն իրականացված տեղափոխությանը):

Այս ընդհանուր կանոնից ՖԻՖԱ-ի կանոնակարգի Հավելված 4-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է հետևյալ բացառությունը՝ եթե նախկին ակումբը խաղացողին չի առաջարկում նոր պայմանագիր, ապա նրան փոխհատուցում չի վճարվում, եթե միայն նախկին ակումբը չհիմնավորի, որ ունի փոխհատուցում ստանալու իրավունք: **Նախկին ակումբը պարտավոր է խաղացողին առաջարկել նոր պայմանագիր** գրավոր ձևով, որն ուղարկվում է պատվիրված նամակով գործող պայմանագրի ժամկետի ավարտից առնվազն 60 օր առաջ: Բացի այդ, առաջարկը պետք է առնվազն հավասարարժեք լինի գործող պայմանագրին: Նշված դրույթը չի խախտում փոխհատուցում ստանալու նախկին ակումբի/ակումբների իրավունքը: Նշված դրույթը կիրառելի է միայն Եվրոպական միության, ինչպես նաև Եվրոպական տնտեսական գոտու տարածքում իրականացվող միջազգային տրանսֆերների դեպքում:

Նման նորմի սահմանումը ՖԻՖԱ-ի կանոնակարգում պայմանավորված է ԵՄ-ում աշխատուժի ազատ տեղաշարժն ապահովելու անհրաժեշտությամբ և արդյունք է Եվրոպական հանձնաժողովի հետ տեղի ունեցած քննարկումների:

ՌՖՄ կանոնակարգի կարգավորումը.

ՌՖՄ կանոնակարգի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելու կապակցությամբ որևէ փոխհատուցում չի վճարվում, եթե այլ բան նախատեսված չէ Կանոնա-

կարգով (ՌՖՄ կանոնակարգը հատուկ կարգավորում չի նախատեսում այն դեպքի համար, երբ ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում նրա աշխատանքային պայմանագրի գործողության ավարտից որոշակի ժամանակ առաջ և կապված չէ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ավարտով պայմանավորված տեղափոխության հետ):

Այսպիսով, ՌՖՄ կանոնակարգում ընդհանուր կանոնը մարզումային փոխհատուցում չվճարելն է, եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում նրա աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ավարտի կապակցությամբ:

Սակայն, ՌՖՄ կանոնակարգի 23-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է՝ որպես սույն հոդվածի 1-ին կետից բացառություն, սահմանվում է, որ պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբն առաջարկում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մինչև այն մրցաշրջանի ավարտը, որում լրանում է նրա 23 տարին, կնքել նոր աշխատանքային պայմանագիր՝ նոր կամ ավելի բարենպաստ պայմաններով, իսկ այդ ֆուտբոլիստն, այնուամենայնիվ, հրաժարվում է և տեղափոխվում նոր ֆուտբոլային ակումբ՝ օգտվելով աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի ավարտից, նախկին ակումբը պահպանում է փոխհատուցում ստանալու իրավունքը, հակառակ դեպքում զրկվում է այդ իրավունքից:

Ինչպես կարելի է նկատել, չնայած, ՖԻՖԱ և ՌՖՄ կանոնակարգերը սահմանում են միմյանց հակադիր ընդհանուր կանոններ, սակայն և՛ ՖԻՖԱ, և՛ ՌՖՄ կանոնակարգերը սահամանում են մարզումային փոխհատուցման վճարման պարտականություն այն դեպքում, երբ նախկին ակումբը ֆուտբոլիստին առաջարկել է կնքել նոր պայմանագիր նախկին պայմանագրին նույնական կամ բարելավված պայմաններով, իսկ ֆուտբոլիստը հրաժարվել է: Նման նորմի նախատեսումը, ըստ էության, պայմանագրային (հարաբերությունների) կայունության սկզբունքի լրացուցիչ երաշխիք է, որը միտված է ավելի բարձր մակարդակի բարձրացնել խաղացողների սոցիալական պաշտպանվածության աստիճանը, քանի որ, նախկին ակումբը, որը հետաքրքրված է ֆուտբոլիստի հետագա ծառայություններով, (իսկ եթե ֆուտբոլիստի հետ չստացվի նոր պայմանագիր ստորագրել, ապա գոնե մարզումային փոխհատուցում ստանալու մեջ) պետք է նոր պայմանագիր առաջարկի ֆուտբոլիստին՝ նույն կամ ավելի

բարենպաստ պայմաններով, իսկ ֆուտբոլիստը կունենա ընտրության հնարավորություն և կընդունի այն առաջարկը, որն իրեն հնարավորություն կտա բարելավելու իր խաղամակարդակը (հետևաբար և տրանսֆերային արժեքն ու հետաքրքրվածությունն ավելի բարձրակարգ ակումբների կողմից), ոչ թե կընդունի նոր ակումբի առաջարկը միայն այն պատճառով, որ ստիպված է (նախկին ակումբի հետ պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում գործազուրկ դառնալու վտանգից դրդված):

Նման նորմի նախատեսումը բխում է ֆուտբոլիստների շահերից՝ ակումբների՝ փոխհատուցում ստանալու ակնկալիքը պայմանավորելով ֆուտբոլիստին նոր առաջարկ անելու հանգամանքով: Սակայն նման մոտեցումը լիովին արդարացված է (ինչպես նշված է ՖԻՖԱ կանոնակարգում՝ չի խախտում ակումբների իրավունքները) հաշվի առնելով այն, որ ակումբները ֆինանսապես շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան ֆուտբոլիստները, բացի այդ ֆուտբոլի զարգացման գրավականն առաջին հերթին տաղանդավոր ֆուտբոլիստներն են, որոնք պետք է ունենան բարձր սոցիալական երաշխիքները՝ մոտիվացված աշխատելու համար, ինչից համաշխարհային ֆուտբոլը միայն օգուտներ կքաղի:

ՀՖՖ կանոնակարգի կարգավորումը.

ՀՖՖ-ի կանոնակարգի 20-րդ հոդվածի համաձայն՝ մարզումային փոխհատուցում պետք է վճարվի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբ(ներ)ին՝ ….. երբ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է մի ակումբից մյուսը (պայմանագրի ընթացքում կամ **ավարտից հետո**): Այսպիսով, ՀՖՖ-ի կանոնակարգում սահմանված ընդհանուր կանոնն այն է, որ մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման նույնիսկ պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այլ ակումբ տեղափոխվելու դեպքում և այս կանոնից նախատեսված չէ որևէ բացառություն: Գտնում ենք, որ մարզումային փոխհատուցման վճարման պարտականության նախատեսումը ֆուտբոլիստի աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից հետո նոր պայմանագիր կնքելու դեպքում ընդամենը ՖԻՖԱ կանոնակարգի ոչ լիարժեք թարգմանության արդյունք է և աղավաղում է ֆուտբոլիստի՝ որպես «ազատ գործակալ» հանդես գալու իրավունքը («ազատ գործակալի» կարգավիճակի էությունը այն է, որ ֆուտբոլիստը չունի որևէ գործող պայմանագիր և նրա հետ պայմա-

նագիր կնքելու դեպքում ակումբն ազատվում է տրանսֆերային, մարզումային փոխհատուցման և այլ հատուցումների գումարների վճարումից): Առաջարկում ենք ՀՖՖ կանոնակարգում տեղ գտած այս նորմը համապատասխանեցնել ՖԻՖԱ կանոնակարգի կարգավորմանը: Առաջարկում ենք նաև ՀՖՖ կանոնակարգում նախատեսել դրույթ, ըստ որի, ակումբը կպահպանի մարզումային փոխհատուցման իրավունքը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում, եթե վերջինիս առաջարկի նոր պայմանագիր նախկին պայմանագրի պայմաններին համարժեք կամ բարելավված պայմաններով: Նշված դրույթի նպատակահարմարության հիմնավորումը շարադրված է վերը:

<u>3. Մարզումային փոխհատուցման վճարման պարտականության իրականացման ժամկետը</u>.

ՖԻՖԱ կանոնակարգի կարգավորումը.

ՖԻՖԱ կանոնակարգի հավելված 4-ի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ թե՛ ֆուտբոլիստի 1-ին պրոֆեսիոնալ պայմանագրի կնքման, թե՛ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցումը պետք է վճարվի ֆուտբոլիստի գրանցումից հետո 30 օրվա ընթացքում:

ՖԻՖԱ կանոնակարգի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը սահմանում են, որ գրանցումը պետք է իրականացվի միայն գրանցման ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքի, երբ ֆուտբոլիստի պայմանագիրն ավարտվում է մինչև գրանցման ժամանակահատվածի սկիզբը, նման դեպքում ֆուտբոլիստի գրանցումը թույլատրվում է գրանցման ժամանակահատվածից դուրս:

ՖԻՖԱ կանոնակարգի 11-րդ հոդվածը, որը պարտադիր է ազգային ասոցիացիաների, այդ թվում՝ ՀՖՖ, կանոնակարգերում ներառման համար, անիրավաչափ է համարում չգրանցված ֆուտբոլիստի մասնակցությունը պաշտոնական խաղերին և հանգեցնում է ինչպես ակումբի, այնպես էլ ֆուտբոլիստի պատասխանատվությանը:

ՌՖՄ կանոնակարգի կարգավորումը.

ՌՖՄ կանոնակարգի 14-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է ֆուտբոլիստների գրանցման նույնպիսի կարգ, ինչպիսին սահմանված է ՖԻՖԱ կանոնակարգի 6-րդ հոդվածում:

ՌՖՄ կանոնակարգի 16-րդ հոդվածի և 6-րդ գլխի նորմերի համաձայն՝ առաջին անգամ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքող ֆուտբոլիստի գրանցման համար պարտադիր է ներկայացնել փոխհատուցման պայմանագրի օրինակը:

ՌՖՄ կանոնակարգի 21-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ փոխհատուցումը վճարվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սկսած ֆուտբոլիստի՝ առաջին պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբում գրանցման պահից, եթե այլ ժամկետ նախատեսված չէ փոխհատուցման վճարների մասին պայմանագրով: Փոխհատուցման վճարի վճարման ժամկետները խախտելու դեպքում առաջին պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբի նկատմամբ կարող են կիրառվել մարզական պատժամիջոցներ: Բացի այդ, վճարման ժամկետի կետանց թույլ տված՝ ֆուտբոլիստի առաջին պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբը ՎԼՊ-ի որոշմամբ ֆուտբոլիստին մարզած, կրթած մարզադպրոցներին (սիրողական ֆուտբոլային ակումբներին) վճարում է տույժ, որը հաշվարկվում է ելնելով ՌԴ ԿԲ-ի կողմից սահմանված վերաֆինանսավորման դրույքաչափից, որը գործում է որոշման կայացման օրը, եթե փոխհատուցման պայմանագրով այլ սանկցիա նախատեսված չէ այդ խախտման համար:

Եթե ֆուտբոլիստն իրավաչափորեն (օրենքին համապատասխան) **է պայմանագիր կնքել իր առաջին ֆուտբոլայի ակումբի հետ**, ապա վճարվելիք փոխհատուցման գումարի և վճարման ժամկետների վերաբերյալ **որևէ վեճ չպետք է ազդեցություն ունենան ֆուտբոլիստի պրոֆեսիոնալ մարզական գործունեության վրա:**

Վճարման ենթական **փոխհատուցման գումարի չափի վերաբերյալ վեճ առաջանալու դեպքում Վեճերի լուծման պալատը,** նոր (առաջին) ֆուտբոլային ակումբի գրավոր դիմումի հիման վրա **կարող է որոշում կայացնել ֆուտբոլիստի ժամանակավոր գրանցման վերաբերյալ** նրա առաջին պրոֆեսիոնալ ակումբում՝ մինչև փոխհատուցման չափի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցման վճարման ժամկետների վերաբերյալ ՌՖՄ կանոնակարգը որևէ նորմ չի սահմանել:

ՀՖՖ կանոնակարգի կարգավորումը.

ՀՖՖ կանոնակարգի 6-րդ հոդվածի 3-րդ կետը, կրկնելով ՖԻՖԱ կանոնակարգի նույն հոդվածի նույն կետը, սահմանել է, որ ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է գրանցման ժամանակահատ-

վածի ընթացքում՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքում, երբ ֆուտբոլիստի աշխատանքային պայմանագիրը լրանում է մինչև գրանցման ժամանակահատվածի սկիզբը:

ՀՖՖ կանոնակարգի հավելված 4-ի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ երբ խաղացողն առաջին անգամ գրանցվում է իբրև պրոֆեսիոնալ, ապա նրան գրանցող ակումբը պարտավոր է 30-օրյա ժամկետում մարզումային փոխհատուցում վճարել բոլոր այն ակումբներին, որտեղ գրանցված է եղել խաղացողը (համաձայն Ֆուտբոլիստի Անձնագրում նկարագրված կարիերայի պատմության)՝ սկսած նրա 12 տարին լրանալու մրցաշրջանից:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցում պետք է վճարվի միայն նրա նախկին ակումբին՝ տվյալ ակումբում խաղացողի արդյունավետ մարզման ժամանակահատվածի համար:

ՀՖՖ կանոնակարգի հավելված 3-ի 4-րդ գլխի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ներքին տեղափոխության դեպքում գրանցման դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացվեն փոխհատուցման վճարը (այդ թվում՝ Մարզումային փոխհատուցման) հաստատող փաստաթղթերը (վճարման հանձնարարականի պատճենը և ստացված գումարի վերաբերյալ նախկին ակումբի կողմից լրացված ձևաթուղթը):

Այսպիսով, և՛ ՖԻՖԱ, և՛ ՌՖՄ կանոնակարգերը սահմանում են մարզումային փոխհատուցումը 30-օրյա ժամկետում՝ առաջին անգամ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքած ֆուտբոլիստի գրանցման պահից սկսած:

Ինչ վերաբերում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցում վճարելու ժամկետներին, ապա ՖԻՖԱ կանոնակարգի մոտեցումը նույնն է, ինչ առաջին անգամ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքող ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում: Իսկ ՌՖՄ կանոնակարգը, ինչպես նշվեց, որևէ ժամկետ չի սահմանում մարզումային փոխհատուցման վճարման համար, ինչը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է այն հանգամանքով, որ ՌՖՄ կանոնակարգի ընդհանուր կանոնի համաձայն՝ նկարագրված դեպքում մարզումային փոխհատուցում

վճարման ենթակա չէ: Սակայն կարծում ենք, որ մարզումային փոխհատուցման վճարման ժամկետ պետք է սահմանվեր, քանի որ ընդհանուր նորմից նույն կանոնակարգը սահմանում է նաև բացառություններ, բացի այդ ենթադրվում է, որ մինչև պայմանագրի ժամկետի լրանալը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում ևս պետք է վճարվի մարզումային փոխհատուցում՝ չնայած հատուկ կարգավորման բացակայությանը:

Ինչ վերաբերում է ՀՖՖ կանոնակարգին, ապա դրա ձևակրեպումից ընդհանրապես անհասկանալի է, թե որ ժամկետից սկսած 30-օրյա ժամկետում պետք է վճարվի մարզումային փոխհատուցումն առաջին անգամ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքած ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցման վճարման ժամկետ կանոնակարգում ընդհանրապես նախատեսված չէ այն պարագայում, երբ, ի տարբերություն ՌԴ-ի, ՀՀ-ում նշված դեպքում մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման:

Ի տարբերություն ՖԻՖԱ և ՌՖՄ կանոնակարգերի, ՀՖՖ կանոնակարգը ֆուտբոլիստի գրանցման համար պարտադիր ներկայացման ենթակա է համարում նաև մարզումային փոխհատուցման վճարումը և մյուս կողմից դրա ստացումը հավաստող փաստաթղթերը: Նման կարգավորման պայմաններում ավելի է կարևորվում վճարման ժամկետի սահմանման հարցը, քանի որ ՀՖՖ կանոնակարգի 6-րդ հոդվածը գրանցման ժամանակահատվածներից մեկի համար նախատեսում է 28 (փետրվարի 1-ից 28-ը), այլ, ոչ թե 30 օր, ուստի, եթե ակումբը ցանկանում է գրանցել ֆուտբոլիստին նշված գրանցման ժամանակահատվածում, ապա, իրականում, պետք է փոխհատուցման գումարը վճարի ոչ թե 30, այլ 28 օրվա ընթացքում:

Ամեն դեպքում, ֆուտբոլիստի գրանցումը մարզումային փոխհատուցումը վճարած լինելու հանգամանքի հետ կապելն ընդունելի համարել չի կարելի, քանի որ կարող է վտանգվել ֆուտբոլիստի բնականոն գործունեությունը: Մասնավորապես, մինչև վճարման իրականացումը ֆուտբոլիստը շարունակում է գրանցված մնալ իր նախկին ակումբում այն պարագայում, երբ լուծել է նրա հետ կնքված պայմանագիրը: Սակայն ֆուտբոլիստը չի կարող գրանցվել նաև նոր ակումբում, քանի դեռ ֆեդերացիա չեն ներկայացվել մարզումային փոխհատուցման վճարումը և դրա ստացումը հավատող փաս-

տաթղթերը, իսկ ՀՖՖ կանոնակարգի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միայն գրանցված խաղացողն իրավունք ունի մասնակցելու կազմակերպված ֆուտբոլին: Ստացվում է, որ ֆուտբոլիստը հարկադիր պարապուրդի է մատնվում այնքան ժամանակ, քանի դեռ մարզումային փոխհատուցում չի վճարվել նախկին ակումբին: Խնդիրն ավելի է բարդանում այն դեպքում, երբ փոխհատուցում չի վճարվել գրանցման ժամանակահատվածի ավարտի պահին, քանի որ ՀՖՖ կանոնակարգի 6-րդ հոդվածը սահմանում է, որ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստները պետք է գրանցվեն գրանցման ժամանակահատվածի ընթացքում և չի սահմանել այս կանոնից որևէ բացառություն (այդ թվում՝ փոխհատուցումն ուշ վճարելու հիմքով), ուստի ֆոտբոլիստը չի կարող մասնակցել կազմակերպված ֆուտբոլին մինչև գրանցման հաջորդ ժամանակահատվածի սկիզբը:

Այսպիսով, ֆուտբոլիստը պետք է զրկվի մարզական պրակտիկայից մինչև գրանցման հաջորդ ժամանակահատվածի սկիզբը՝ բաց թողնելով մրցաշրջանի առնվազն կեսը:

Նման իրավիճակները բացառելու համար, հաշվի առնելով ֆուտբոլիստի մեղքի բացակայությունը նման իրավիճակների առաջացման մեջ, առաջարկում ենք ֆուտբոլիստի գրանցումն իրականացնել առանց մարզումային փոխհատուցման վճարման, սահմանել 30-օրյա ժամկետ փոխհատուցման վճարման համար՝ հաշվարկած ֆուտբոլիստի գրանցման պահից (վճարման և վճարի ստացման փաստաթղթերը ՀՖՖ ներկայացնելու պայմանով): Ինչպես նաև, առաջարկում ենք ՀՖՖ կանոնակարգում նախատեսել նորմ, որը կբացառի իրավաչափորեն կնքված աշխատանքային պայմանագրի առկայության դեպքում, միայն ակումբի կողմից մարզումային փոխհատուցման շուրջ վեճերի առկայության հիմքով ֆուտբոլիստի գրանցման մերժումը:

Այսպիսով, ակումբների միջև մարզումային փոխհատուցման կապակցությամբ ծագած վեճերը չեն անդրադառնա ֆուտբոլիստի բնականոն մարզական գործունեության վրա, ինչը ֆուտբոլիստի և՛ ֆինանսական ապահովվածության, և՛ մարզավիճակի պահպանման, և՛ պայմանագրի կայունության լրացուցիչ երաշխիք է:

Խնդրի լուծման համար ֆուտբոլիստի ժամանակավոր գրանցման ինստիտուտն անընդունելի է, քանի որ, նույնիսկ այն դեպքում, երբ ՎԼՊ-ն ակումբին պարտավորեցնի վճարել մարզումային փոխ-

հոտուցման գումարը, իսկ վերջինս, այնուամենայնիվ, չվճարի, դա չպետք է անդրադառնա ֆուտբոլիստի գործունեության վրա (օրինակ՝ գրանցումն անվավեր ճանաչելու հետևանքով): Նշված դեպքերի համար կիրառելի են ՀՖՖ կանոնակարգի 9-րդ հավելվածի 8-րդ և 14-րդ կետերը, որոնք սահմանում են, որ Վեճերի լուծման պալատը կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

8. Ակումբի կողմից մարզումային փոխհատուցման վճարումների ժամկետի խախտման դեպքում՝ մրցաշարային միավորների նվազեցում՝(Կարգապահական կոմիտեի որոշմամբ) և/կամ արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով,

14. Ակումբի կողմից այլ ակումբին փոխհատուցման վճարման պարտավորությունները և/կամ գործակալի հետ կնքված պայմանագրի դրույթները չկատարելու դեպքում՝ տուգանք ակումբին մինչև 500 000 դրամի չափով և/կամ արգելք ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով:

ՌՖՄ կանոնակարգի օրինակով նոր ակումբին կարելի է պարտադրել նաև հին ակումբ(ներ)ին վճարել տոկոսներ՝ փոխհատուցման վճարման կետանցի ողջ ժամանակահատվածի համար՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կանոնները:

4. Մարզումային փոխհատուցման հաշվարկման մեխանիզմը.

ՖԻՖԱ կանոնակարգի կարգավորումը.

Ըստ ՖԻՖԱ կանոնակարգի հավելված 4-ի 4-րդ հոդվածի՝ ֆուտբոլիստին կրթելու և պատրաստելու համար կատարված ծախսերը ծածկելու անհրաժեշտությունից ելնելով մարզումային փոխհատուցման հաշվարկման համար ասոցիացիաներին հանձնարարություն է տրվում իրենց ակումբները բաժանել առավելագույնը 4 կատեգորիաների՝ կախված ֆուտբոլիստներ պատրաստելու համար նրանց կողմից կատարվող ֆինանսական ներդրումների չափից: Մարզումային ծախսերը որոշվում են յուրաքանչյուր կատեգորիայի համար առանձին և համապատասխանում են այն գումարին, որն անհրաժեշտ է 1 տարվա ընթացքում մեկ ֆուտբոլիստ պատրաստելու համար՝ բազմապատկած «խաղացողի գործակցի» միջինով, որն իրենից ներկայացնում է խաղացողների այն քանակը (ցուցանիշը), որն անհրաժեշտ է 1 պրոֆեսիոնալ պատրաստելու համար:

Կոնֆեդերացիաների կողմից ակումբների յուրաքանչյուր կատեգորիայի համար որոշվող մարզումային ծախսերը, ինչպես նաև ակումբների դասակարգումը յուրաքանչյուր ասոցիացիայի ներսում հրապարակվում է ՖԻՖԱ-ի կայքէջում (www.FIFA.com): Դրանք ճշգրտվում են յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում:

ՌՖՄ կանոնակարգի կարգավորումը.

ՌՖՄ կանոնակարգի 22-րդ հոդվածի համաձայն՝ մարզումային փոխհատուցման գումարը որոշվում է սույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ կետերով սահմանված կարգով և բազմապատկվում է այն պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբի կատեգորիայի գործակցով, որտեղ տեղափոխվում է ֆուտբոլիստը՝ սահմանված սույն կանոնակարգի Հավելված 1-ով (ՌՖՄ կանոնակարգի Հավելված 1-ի համաձայն՝ Պրեմիեր լիգայում հանդես եկող ակումբների համար գործում է 3, Առաջին դիվիզիոնում հանդես եկող ակումբների համար՝ 2, Երկրորդ դիվիզիոնում հանդես եկող և այլ պրոֆեսիոնալ ակումբների համար՝ 1 գործակիցը):

Մարզումային փոխհատուցման բազային չափը որոշվում է ելնելով այն տարիների քանակից (եթե 1 տարուց պակաս է, ապա հաշվարկվում է համամասնորեն), որոնց ընթացքում ֆուտբոլիստը գրանցված է եղել այդ մարզադպրոցում/սիրողական ֆուտբոլային ակումբում հետևյալ չափերով՝

1. Ֆուտբոլիստի 12-րդ տարեդարձի օրացուցային տարի՝ 20.000 ռուբլի,

(…..)

5 . Ֆուտբոլիստի 16-րդ տարեդարձի օրացուցային տարի՝ 40.000 ռուբլի,

(…..):

Այն դեպքում, երբ ֆուտբոլիստը մարզվել և կրթություն է ստացել պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբին առընթեր մարզադպրոցում (այսինքն, այնպիսի մարզադպրոցում, որը հիմադրվել է պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբի կողմից կամ հանդիսանում է տվյալ ֆուտբոլային ակումբի դուստր կազմակերպությունը կամ կառուցվածքային ստորաբաժանումը) փոխհատուցման բազային չափ է համարվում ֆուտբոլիստի պատրաստման համար տվյալ մարզադպրոցի կողմից փաստացի կատարված (փաստաթղթային հաստատում ունեցող) ծախսերի չափը կամ ֆուտբոլիստի և մարզադպրոցի միջև

կնքված ֆուտբոլիստին կրթելու և պատրաստելու մասին պայմանագրով սահմանված գումարի չափը (հաշվի առնելով պայմանագրում նշված գումարի և դպրոցի կողմից ֆուտբոլիստի պատրաստման համար կատարված ծախսերի համաչափության սկզբունքը):

Ֆուտբոլիստին մարզելու և կրթելու համար կատարված փաստացի ծախսերի չափը, ինչպես նաև ֆուտբոլիստին մարզելու և կրթելու ժամանակահատվածի համար մարզադպրոցի և պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբի միջև կապն ապացուցելու պարտականությունը կրում է այն մարզադպրոցը, որը հավակնում է փոխհատուցում ստանալուն: Եթե անհնարին է ապացուցել ֆուտբոլիստի մարզման և կրթության համար փաստացի կատարված ծախսերի չափը, ապա փոխհատուցման հաշվարկը կատարվում է սույն հոդվածին համապատասխան (ըստ էության 2-րդ կետն առաջ մղվում) (այն ֆուտբոլային ակումբի գործակցով, որտեղ տեղափոխվում է ֆուտբոլիստը):

Այն դեպքում, երբ ֆուտբոլիստը կնքել է իր առաջին աշխատանքային պայմանագիրը պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբի հետ, որը հանդիսանում է այն մարզադպրոցի հիմնադիրը (հիմնադիրներից մեկը), որը մասնակցել է ֆուտբոլիստի կրթմանն ու պատրաստմանը, կամ այդ դպրոցը հանդիսանում է պրոֆեսիոնալ ակումբի կառուցվածքային ստորաբաժանումը կամ ֆինանսավորվում է պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբի կողմից պայմանագրային հիմունքներով, փոխհատուցման վճարումը պարտադիր չէ, եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբն ու մարզադպրոցը չեն եկել այլ համաձայնության:

ՀՖՖ կանոնակարգի կարգավորումը.

Ըստ ՀՖՖ կանոնակարգի Հավելված 4-ի 5-րդ հոդվածի՝ մարզումային ծախսերը խաղացողների մարզումը և զարգացումն ապահովելու նպատակով ակումբի կողմից տարեկան կտրվածքով կատարած ուղղակի ներդրումներն են՝ «ֆուտբոլիստի գործոն»-ի միջին հաշվարկով: «Ֆուտբոլիստի գործոն»-ը ընդհանուր մարզվողների և պատրաստված Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների քանակի հարաբերակցությունն է: (…):

Ներքին տեղափոխությունների համար ՀՖՖ ակումբները, ըստ մարզումային ծախսերի, ՀՖՖ-ի կողմից դասակարգված են (…) 4 կա-

տեգորիաների, որը (…) հրապարակված է սույն կանոնակարգի 7-րդ հավելվածում:

Ըստ ՀՖՖ կանոնակարգի հավելված 4-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ որպես կանոն՝ խաղացողի նախկին ակումբ(ներ)ին վճարվելիք մարզումային փոխհատուցումը հաշվարկելու համար անհրաժեշտ է վերցնել այն ծախսերը, որոնք կկատարվեին նոր ակումբի կողմից տվյալ խաղացողին մարզելու դեպքում:

Գրանցման գործընթացը բարելավելու և ֆուտբոլիստին՝ (օրինակ՝ 12 տարին լրանալուց հետո) ակումբում գրանցելու դիմումը առավելագույնս արագ ՀՖՖ ներկայացնելու նպատակով մարզումային փոխհատուցման գումարը հաշվարկել ըստ եռամսյակների՝ հետևյալ կարգով.

- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը ակումբում տվյալ տարում կազմում է մինչև մեկ եռամսյակ (92 օր), ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես տարեկանի 1/4-ը:
- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը ակումբում տվյալ տարում կազմում է մեկ եռամսյակից մինչև մեկ կիսամյակ (93-ից 184 օր), ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես տարեկանի 1/2-ը:
- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը ակումբում տվյալ տարում կազմում է մեկ կիսամյակից մինչև երեք եռամսյակ (185-ից 276 օր), ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես տարեկանի 3/4-ը:
- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը ակումբում տվյալ տարում կազմում է երեք եռամսյակից մինչև մեկ տարի (227-ից 366 օր), ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես մեկ տարվա:

ՀՖՖ կանոնակարգի 7-րդ հավելվածը սահմանում է մարզումային ծախսերի հետևյալ չափերը ներքին և արտաքին տրանսֆերների համար՝

Մարզումային ծախսերն ըստ կարգերի՝

Ակումբի կարգը	Միջազգային տրանսֆեր (եվրո)	Ներքին տեղափոխություն (դրամ)
1-ին կարգ	90 000	80 000
2-րդ կարգ	60 000	60 000
3- րդ կարգ	30 000	40 000
4- րդ կարգ	10 000	20 000

Այս աղյուսակից հետո նշված է ակումբների բաշխումն ըստ կարգերի, օրինակ՝

Ակումբի անվանումը	վայրը	կարգը	
		Միջազգային տրանսֆեր	Ներքին տեղափոխություն
«Փյունիկ» ՖԱ	Երևան	3	1
«Բանանց» ՖԱ	Երևան	3	1
«Արարատ» ՖԱ	Երևան	4	2

Այսպիսով, ՖԻՖԱ կանոնակարգը սահմանել է այն հիմնական ցուցանիշները, որոնք պետք է հաշվի առնեն ազգային ասոցիացիաները՝ մարզումային փոխհատուցման հաշվարկի կարգը սահմանելիս: Դրան համապատասխան ՌՖՄ կանոնակարգով նախատեսվել են ակումբների 4 կատեգորիաներ, յուրաքանչյուր կատեգորիայի ակումբի համար սահմանվել են համապատասխան գործակիցներ, ինչպես նաև սահմանվել է ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման բազային չափը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս հեշտությամբ հաշվարկել մարզումային փոխհատուցման չափը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ փոխհատուցման գումարի բազային չափը բազմապատկելով համապատասխան ակումբի գործակցով, իսկ ստացված թիվը բազմապատկել այն տարիների քանակով, որոնց ընթացքում ֆուտբոլիստը գրանցված է եղել տվյալ մարզադպրոցում/սիրողական ֆուտբոլային ակումբում:

ՀՖՖ կանոնակարգի շարադրանքում մարզումային փոխհատուցման հաշվարկի մեխանիզմն աղավաղված է, մասնավորապես, ՀՖՖ կանոնակարգի հավելված 4-ի 5-րդ հոդվածում խոսվում է մարզու-

մային ծախսերի և դրանց հաշվարկամ ժամանակ օգտագործվող «ֆուտբոլիստի գործոնի («գործոն» տերմինի կիրառումը ոչ լիարժեք թարգմանության արդյունք է)» մասին, սակայն ՀՖՖ կանոնակարգի նույն հավելվածի 6-րդ հոդվածում սահմանվում է մարզումային փոխհատուցման հաշվարկի հետևյալ բանաձևը՝ համապատասխան ակումբի մարզումային ծախսը բազմապատկած այն տարիների քանակով, որոնց ընթացքում ֆուտբոլիստը գրանցված է եղել այն ակումբում, որին պետք է վճարվի փոխհատուցումը: Ինչպես կարելի է նկատել, ՀՖՖ կանոնակարգի 7-րդ հավելվածում սահմանված է մարզումային փոխհատուցման գումարի չափը յուրաքանչյուր կատեգորիայի համար, ոչ թե յուրաքանչյուր կատեգորիային համապատասխանող գործակիցը:

Սա նշանակում է, որ ՀՖՖ կողմից անտեսվել է ՖԻՖԱ-ի կողմից սահմանված չափանիշներից «ֆուտբոլիստի գործակիցը»: Նման մոտեցման արդյունքում մարզումային փոխհատուցման չափը հաշվարկվում է կրկնապատիկ, եռապատիկ պակաս, բացի այդ հիմնավորված չի կարելի համարել մարզումային ծախսերի նման փոքր թվերը, քանի որ նույնիսկ ոլորտի ֆինանսական կողմով չհետաքրքրված անձին անգամ պարզ է, որ 1 ֆուտբոլիստ մարզելու համար տարեկան 80000 դրամը չափազանց փոքր գումար է:

Առաջարկում ենք ՀՖՖ կանոնակարգի մարզումային փոխհատուցման գումարի հաշվարկամ բանաձևում ներառել «ֆուտբոլիստի գործակիցը», ինչպես նաև վերանայել փոխհատուցման գումարի բազային չափը:

Айкуи Седракян
Аспирант Кафедры гражданского права
Юридического факультета ЕГУ

КОМПЕНСАЦИЯ ЗА ОБУЧЕНИЕ И ПОДГОТОВКУ В ФУТБОЛЕ

В статье с заголовком «Компенсация за обучение и подготовку в футболе» представлена сущность компенсации за обучение и подготовку, как важной гарантии финансовой стабильности футбольных клубов и школ. В статье мы попытались выявить те проблемы, которые есть в нормах регулирующие компенсацию за обучение и подготовку футболиста «Регламента о статусе и переходам футболистов»

футбольной федерации Армении (далее Регламент ФФА) и предложить пути для его усовершенствования.

В статье были также представлены нормы регулирующие компенсацию за обучение и подготовку одноименных регламентов ФИФА и Российского футбольного союза. Предлогая некоторые изменения и дополнения в регламенте ФФА были учтени и регулировки выше названных актов.

Haykuhi Sedrakyan
PHD Student of the YSU Chair of Civil Law

TRAINING COMPENSATION IN FOOTBALL ARTICLE

SUMMARY

In the article titled "Training compensation in football" is presented the nature of the compensation for training and education, as an important guarantee for the financial stability of football clubs and schools. We have not only tried to identify the problems that exist in the rules governing compensation for the training and preparation of a football player, which are reflected in the "Regulations on the Status and Transfer of players," of the Armenian Football Federation (hereinafter regulation of the FFA) but also had suggested ways of improving regulations. The article also presents the rules governing compensation for the training and preparation of similar regulations of FIFA and the Russian Football Union. It is important to emphasize that some amendments to the regulations of the FFA which are suggested in the article are based on the above mentioned acts.

Բանալի բառեր՝ *մարզումային փոխհատուցում, առաջին պրոֆեսիոնալ պայմանագիր, պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխություն, «ֆուտբոլիստի գործակից», Փոխհատուցման բազային չափ*
Ключевые слова: *компенсация за подготовку, первый профессиональный контракт, трансфер профессионального футболиста, коэффициент футболиста, базовая сумма компенсации, регистрационный период.*
Keywords: *raining compensation, First professional contract, Transfer of the professional footballer, «Player factor», Base amount of compensation.*